№ 7
ՇԱԲԱԹ 24 ՓԵՏՐՎԱՐԻ
1873
ԺԳ-դ ՏԱՐԻ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

Լրագրիս միջոցով որեւիցէ յայտարարութիւն տպագրել տալ ցանկացողը պէտք է 10 միջակ տառերի համար վճարէ 1 կոպէկ: Յայտարարութիւն ընդունվում է և օտար լեզուներով:

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռ.: Ստորագրվել կարելի է Խմբագրատան (Թամամշեւի տանը). և Հաւ. Ենֆիաճեանցի խանութում:

№ 7
ՇԱԲԱԹ 24 ՓԵՏՐՎԱՐԻ
1873
ԺԳ-դ ՏԱՐԻ

Թիֆլիզ 24-ին փետրվարի·

Լրագիրների մէջ կարդում ենք, որ Չինաստանի Վեհափառ կայսեր հրամանաւ կազմվել է մի խումբ «լուսաւորութեան պաշտպանների» անունով, և որոշել է տարեկան մի միլիոն, որ այդ գումարովը ուղարկվեն Չինացի ընդունակ երիտասարդներ Ամերիկայ ուսում առնելու, որոնք ուսման ընթացքն աւարտելուց յետ վերադառնան իւրեանց հայրենիքը, այստեղ լուսաւորութիւն տարածելու համար. Նըմանապէս որոշված է, որ իւրաքանչիւր տարի այդպիսի երիտասարդների թիւը և վերոյիշեալ գումարը աւելանայ: Շատ ու քիչ ընդհանուր պատմութեան հետ ծանօթ անձն, որ փոքր ի շատէ գիտէ Չինաստանի պատմութիւնը, նորա մտաւորական զարգացման և քաղաքակրթութեան պայմանները, և Չինաց յարաբերութիւնները դէպի այլազգիքը, նոցա կրօնական աւանդութիւնները, Կոնֆուցիոսի այն բնագիտութեան սկիզբները, որոնք թագաւորում են գլխաւորապէս Չինաստանի թէ մտաւորական և բարոյական և թէ հասարակական և քաղաքական կազմակերպութեանց մէջ, այդպիսի մի անձի աչքումը Չինաց կայսեր վերոգրեալ հրամանը պիտի երևի մի բացառութիւն նոցա բազմադար գոյութեան մէջ և չէ կարող չլինել առիթ քանի մի զըննութեանց: Ձանձրութիւն կլինի ընթերցողի համար այստեղ կարգել մանրամասն Չինաց ընդհանուր զարգացման և յարաբերութիւնների պայմանները: Մենք այստեղ կարևոր ենք համարում ասել միայն, որ Չինացիք, որոնք թուով կազմում են մարդկութեան սևոր մի երրորդ մասն, իւրեանց գիտութեանց և բարոյութեանց գանձը ամուր կողպել էին մարդկութեան միւս մասերի համար և միևնոյն ժամանակը իրանց բոլորովին կատարեալ են զգում էին օտար պետութիւններից և մարդիկներից միւրևիցէ բան փոխ առնելու իրաւունքից: Այդ պատճառաւ Չինացւոց կեանքի մէջ չէր կարող լինել ոչ մի յառաջադիմութիւն, իբրև հետևանք օտար պայմանների ազդեցութեանց: Եթէ կարելի է այսպէս ասել, Չինացիք ենթարկված էին միայն ինքնազարգացման կանոնին, և դարձեալ այդպիսի ինքնազարգացումը չպիտի խախտէր նորա բնութիւնը կազմող կրօնական աւանդութիւնները: Չինաստան ասում էր օտարներին, ես ձեզ չեմ տալ և ձերն ես ունենալ չեմ կամիմ, ես չեմ հիւրընկալ և ձեր հիւրընկալութիւնը մերժում եմ, ես բաւական եմ իմ բնաւորութեամբ, ներքին և արտաքին բնութեան պտուղներով, և ձերի ճաշակը ես առնել անգամ չկամիմ, և ոչ ձեր կրօնը և ձեր ուսումը, լուսաւորութիւնն և քաղաքակրթութիւնն ինձ աւելորդ են, որովհետև ես ունիմ ինքս իմ կոնֆուցիոսի կանոնագրութեանց մէջ: Միով բանիւ, ասում էր Չինաստան ուրիշներին, դուք ձեզ համար, ես ինձ համար, մեր մէջ թող չլինի ոչինչ փոխադարձութիւն, ոչինչ յարաբերութիւն. Այդպէս ես ինձ շրջապատում եմ անքակտելի պատերով, ազգանով յաւիտեան բաժանվում եմ ձեզանից և պաշտպանում եմ իմ գոյութիւնս անանցանելի ցանկով, այն է ձեզ անյայտ իմ շրջակայ աշխարհներով: Եւ իսկ այդպէս վարվեցաւ լաւ մեծին մասին Չինաստան, ինչպէս և խօսեց: Իսկ այժմ ինչպէս և տեսնում ենք, Չինաստանի բազմադար պատերը և աշտարակները ժամանակի բերմունքների գործութեամբ քանդվում են և մարդկութեան գործութիւնները եւրոպական ալիքներ թափվում են Չինաստանի մէջ: Ահա պատճառը, որ վերոգրեալ կայսեր կարգադրութիւնը պիտի համարվի մի անսովոր երևոյթ պատմութեան և քաղաքակրթութեան մէջ:

Բայց միւս կողմից մարդկութեան համար այդ կարգադրութիւնը ինչ օգուտ կարող է բերել, ինչո՞ւ է նա հետաքրքրական: Պարզենք այս հարցը: Առաջադոյն ասենք, թէ արդեօք Չինաստան մինչև այսօր ավել է մեզ մի որ և իցէ երախտաւորութիւն հաւատալու, թէ նա ընդունակ է բերել մարդկութեան օգուտներ, ավել է նա արդեօք մինչև այսօր այնպիսի օգուտներ, որ մենք հաստատապէս կարողանք ունենանք ասել, թէ լուսաւորութեան տարածելը այնտեղ կլինի մարդկութեան համար աւելի օգտաւէտ:

Ինչպէս ասացինք Չինաստան բաժանել էր իրան մարդկութեան միւս հասարակութիւններից. բայց այդ բաժանումն նմանապէս և անջատման ձևերը անբնական և մեքենայական էին, անհամաձայն էին մարդկութեան բնութեան և արտաքին բնութեան ձգտումների կանոններին, որոնք անհրաժեշտ պահանջում են փոխադարձութիւն և յարաբերութիւններ: Անբնական գործ պիտի համարվի առ հասարակ, թէ ներքին և թէ արտաքին բնութեանց պատուարելը, կաշկանդելը: Միևնոյն արեգակն տաքացնում է և լուսաւորում է ամբողջ աշխարհը, միևնոյն սկզբնական բնութիւնը ունի մարդը Չինաստանում և այլ տեղ: Ուրեմն Չինաստանի պարիսպը պիտի համարվէր բնութեան դէմ: Այդ պատճառաւ բնութիւնը և մարդկութիւնը ինքն իւրեան կատարում էր, որքան կարելին էր: Մենք գիտենք որ աշխարհիս մէջ ի սկզբանէ տարածվեցաւ Չինաստանից, որտեղից քարոզիչները ապրեչումը գողանալով տարան այլ աշխարհներ, սուրճի պատուական թերթերը մեր մէջ տարածվեցան Չինաստանցւոց աշխատասիրութեամբ. Նոքա սովորեցրին մեզ նորա գործածութիւնը բաժակով և սորա պատկանելիքով: Շանկայի բնակիչները ուսուցին մեզ հախճապակի գործածելը և սորա համար նոքա հաւէն ընտանեցրին: Չինաստանցիք, չորս հարիւր միլիոն ժողովուրդը, մարդկութեան երրորդ մասը, ամենից առաջ սկսան իւրեանց ազգային կրթութիւնը հիմնելով ուսումնարաններ, որտեղ նոքա գըլխաւորապէս մշակում էին ուսանողի խելքը, հանճարը, միշտ պահպանելով դաստիարակութեան մէջ այն մեթօդը, որ անուանվում է սինտեզ, բազմաթիւ ջրանցքներով նոքա միացնում էին և կապում լայնատարած պետութեան մասերը, և այդ սկզբների վերայ հիմնված էր այն ընդարձակ հասարակական հաստատութիւնը, որ անխախտ մնաց և դիմացաւ հազարամեայ յեղափոխութիւններին, որոնց ենթարկվեցան ուրիշները: Չինաստանցւոց մանաւոր գաղթականութիւնը վկայում է յօգուտ նորա աշխատասիրութեան. Բամբակի արտադրութիւնը տարածվեցաւ նմանապէս և Չինաստանում, որտեղ պահպանվեցաւ այն հիման վերայ, ինչպէս բուրդը Անգլիայումը: Վենետիկցիք փոխառան Չինաստանից կողմնացոյցը և նորա գործածութիւնը ջրային ճանապարհորդութեան համար: Այս ընդհանուր ճշմարտութիւնը, թէ բարոյականութեան առաջնորդ պիտի լինի միտքը, վաղուց հասկացել է Չինաստան և կառավարում է: Չինաստանը հասկացել է, որ կառավարութիւնը միայն այն ժամանակ է բաւարարիչ, ներգործական և հաստատուն, երբ նա հիմնվում է հասարակական հանճարի վերայ: Այս դիպուածքում նա ուղիղ հետևում է բնութեան: Մենք, մեր բարձր հպարտութեամբ ծիծաղում ենք Չինացւոց վերան, նոցա մարմնի կազմուածքը և սովորութիւնները մեզ համար լինում են խնդալու առարկայք: Մենք ասում ենք թէ նոքա բացեն անում իրանց աչքերը ուղիղ, կարծես դուռն է բաց լինում. ծիծաղում ենք նոցա երկար մազերի վերայ, որ նոքա հիւսում են և կապում են կամ ձգում են ետևից: Իսկ մարդկային խելքը չէ կախ այդպիսի զարդարանքից. Չինաստանցիք գտան հնար, որոյ օգնականութեամբ մարդկային սեռի երրորդ մասն հազար տարիներ ապրում է բաղդաւորութեան, բաւականութեան և խաղաղութեան մէջ: Նոքա ասացին.« Դաստիարակեցէք ամէնքին. Իւրաքանչիւր երեխայի վերայ հասարակութիւնը ունի հաւասարաչափ նորա ծնողաց հետ հոգացողութիւն: Մենք պահանջում ենք, որ ամէնքն էլ գնան վարժատուներ, յետոյ ամենախելացիներին հարկաւոր է ուղարկել ակադեմիա և այստեղից կոլե-

---

ՖԵԼԻԵՏՈՆ:

Երեք նամակ. երեք հարց. երեք խորհուրդ. մեծ պաս. այն աշխարհի թղթակից „Մշակ" լրագրի. մի կասկածանք. մի կորուստ. մի կենսագրութիւն. նոր յոյս:

Ես մօտերումս երեք նամակ ստացայ,
Բայց արի մէկը ու կարդացի.

«Պ. Բաղդցի սրախօսութեամբ կարդացի քո փլան փլանովի մասին նկատողութիւնը":

Բայց արի միւսը ու տեսայ, որ նա հէնց միևնոյն փլան փլանովից էր ուղարկած. կարդացինք. «պ. Բաղդցի, ինչ իրաւունքով համարձակվեցաք գրել իմ մասին . . . ես բացատրութիւն եմ պահանջում . . . »:

Արի ու փլանից մի վէր գցի, ասում են մեր քաղաքում, բայց չէ, ես ոչ մշակ եմ, ոչ էլ փլան ունեմ, որ վէր գցեմ . . . մանաւանդ որ Терек. Вѣд. լրագիրը իմ մասին ոչինչ չէ կարող գրել՝ ոչ գնած գիւղեր ունեմ, ոչ էլ միտք ունեմ գնելու. . . . :

Սակայն էլի որ վտանգաւոր բան է եղել ֆելիետոնիստի դերը մեղանում, երբ ամեն մի բանի համար բացատրութիւն են պահանջում:

Բացատրութիւն են պահանջում . . . ումից. . . ֆելիետոնիստից . . : Այս էլի ոչինչ . . . առաւել ողորմելի այն կլինէր, եթէ մի ֆելիետոնիստ, որի ֆելիետոնները միշտ նուիրվում են միևնոյն անձանց յիշատակութեանց, միշտ պարունակում են իր մէջ անարգանք ու յիշոցներ, պահանջէր բացատրութիւններ ձեզ ֆելիետոնիստից . . . : Թէպէտ այս հազիւ պատահելու բան է, բայց սորա նման հրեշներ պատահում են մեր ժամանակ . . . .

—

Վերջապէս բաց արի երրորդ նամակը, որ ուղարկել էր ինձ մի խեղճ գաւառցի Երևանից:

Խեղճ նամակագիրը ինձանից երեք խորհուրդ է հարցնում. Առաջին որ նա գնացել է իւր գիւղից Երևան իւր փոքր եղբօրը այնտեղի ուսումնարանում հանձնելու, բայց տեսուչ հայր սուրբից պատասխան է տացել, թէ զաւակի կանոնով հագուստը այնտեղ ընդունված հագուստի նման պիտի կարել տայ և ամսին էլ մէկ ռուբ. վճարէ: Գիւղացին սահմանելով, որ անկարող է այս պայմանը կատարելու, ըստ որում նոր 15 մանէթ ծախս էր անելու, տարել է երևանի մի ծխական ուսումնարան, որտեղ իրանից առաւել խեղճութիւն ու նահապետականութիւն նկատելով, չէ վստահացել եղբօրը յանձնելու: Յետոյ նա մտածել է Աղեքսանդրապոլ ուղարկել, բայց մի կողմից ճանապարհի ծախսից քաշուելով, միւս կողմից այնտեղի ծխական ուսումնարանների նահապետական յատկութիւնը գիտենալով, միտքը փոխել է:

Այժմ ինձանից խորհուրդ է հարցնում, լաւ չէ անելու արդեօք, եթէ եղբօրը բերէ Թիֆլիս ուսում տալու:

Իմ խորհուրդն այս է, պ. գաւառցի. մեր քաղաքի ծխական ուսումնարանները շատ քիչ են զանազանվում Աղեքսանդրապոլու և Երևանու գիւղերից . . . փոքր ինչ լաւութիւնը այն է, որ աշակերտները շատ սղատ ժամերով օգուտ են քաշում իւրեանց կատարելագործելու . . . : Ուրիշ կերպ չէ կարող էլ լինի, երբ . . . մի տեղ չըկայ միաձայնութիւնն, իսկ միւս տեղ վարժապետին ազատութիւնն . . . և երբ ամիսը 5—15 մանէթ վճարելով ուսուցիչն, կամենումենք բաւականացնել ուսուցիչների և նոցա աշակերտների պէտքը . . . :

Բայց մենք միմիայն յոյս ունենք մեր Ներսիսեան դպրոցի նոր բացուած նախակրթարանից . . . . Ուրեմն շտապիր, պ. գաւառցի, դէպի Թիֆլիս . . . ճանապարհի ծախսի համար էլ հոգս մի անիր, դորա մասին Ներսիսեան ուսումնարանը ինքն կըհոգայ. չէ՞ որ քո եղբայրն էլ ազգի համար պիտի մեծանայ . . : Իսկ երբ փողերը կըստանաս, գաղտ ու չըգաղտ քո ձեռքին է, այդ քո գործն է, ով է քեզանից պահանջողը . . . :

—

Երկրորդ խորհուրդն այն է, որ նամակագրող գաւառցին մեր այժմեան հոգևորականութեան, ուսուցչութեան և հեղինակութեան ժամանակը գիտենալով, կամենում է գաւառութիւնը թողնել ու հարցնում է ինձ. այդ յիշեալ արհեստներից որը առաւել յարմար ու ձեռնտու կլինի նորան . . . . :

Իմ խորհուրդն այս է. եթէ պ. գաւառցին հաստ գլուխ ունի ու բարակ փոր, թող մտնի հոգևորականութեան. փորն էլ շուտով կը հաստացնէ . . . : Եթէ հաստ փոր ունի ու բարակ գլուխ, լաւ է, որ ուսուցչութիւն անէ, որովհետև փորն էլ շուտով կըբարակի . . . : Իսկ ինչ որ վերաբերումէ հեղինակութեան, նա այդ արհեստով կարող է այն կեանքումն էլ պարապել, մահից յետոյ . . . այժմ այնտեղից էլ թղթակցութիւն է ստանում Մշակ լրագիրը :

Բայց բարեկամներիցս մէկը հետևեալ խորհուրդն ես տալիս է. եթէ գաւառցին ոչ կարդալ գիտէ և ոչ գրել, թող մտնի հոգևորականաց դասը . . . . Եթէ քիչ կարդալ գիտէ, քիչ էլ գրել, լաւ է, որ ուսուցչութիւն անէ . . . . իսկ եթէ քիչ կարդալ գիտէ, բայց գրել ոչ, այն ժամանակ ամենից ձեռնտուն հեղինակութիւնն է . . . .

Թողնումեմ այս խորհուրդները պ. գաւառցի ընտրութեան.

—

Երրորդն էլ այն է, որ Էջմիածնից մօտիկ Հախվերիս գիւղում մի վարժապետ մի Մելքի աղջիկ է փախցրել, որ ուզուելիս է եղել նորա մօր.

Այժմ օրերը յետ են բերել, իսկ Մելքոն էլ չէ ցանկանում իւր աղջիկը վարժապետին տալ, չընայելով, որ երկուսն էլ իրար շատ են սիրում . . . : Վաղարշապատումն էլ երկուսն էին փախցրել . . . :

Երևանայ գաւառում այսպէս բաներ շատ են պատահում և շատ անմեղներ վնաս են կրում: Պ. գաւառցին ցաւելով այս մասին խորհուրդ է հարցնում, թէ այդ չարագործութեանց առաջը առնելու հնար ինչով կլինի և կամենում է իմանալ, Թիֆլիսումն էլ պատահումեն այդպիսի բաներ, թէ ոչ.

Ես իմ կողմից կասեմ պ. գաւառցին, որ Թիֆլիսում քիչ է պատահում տանու աղջկանց փախցնելը, բայց այստեղ . . . գիտես պ. գաւառցի, որ հարսներ էլ են փախցնում . . :

Այո, մէկը փախցնումէ միւսի կնոջը, կամ թէ հակառակն է պատահում. երբեմն հարսները հէնց իրանք են փախչում ու ուրիշ մարդիկ ճարում, իսկ այս պատուական մարդիկն էլ ուրիշի կնոջը ճանկում . . . և այսպիսի լուսաւորեալ անձինք (?) իւրեանց բաղդաւոր են համարում . . . . :

Սոքա բաղդաւոր են, ի հարկէ . . . բայց անբաղդները մեր օրիորդներն են . . . նոքա են թշուառներ, որ ոչ ոք նոցա չէ փախցնում: Այս կողմից Երևանու գաւառը համեմատելով Թիֆլիսի գաւառի հետ չափազանց գիա: Այդպիսի ուսանողներից մենք ընտրում ենք մասնաւորական ձեռնարկութեան մէջ յաղթողին և նորան յանձնում ենք նահանգների կառավարութիւնը և վերջապէս այդպիսիները բարձրանում են դէպի իշխանական ատեանները. Չինացիները, շարունակում են նոքա, մեր նախնիքները կարծեցին ազգային համար, մենք ամենից առաւել յարգում ենք ուսումնականութիւնը: Ճանապարհը դէպի մեծութիւն բաց է ամենի համար, ով որ ընդունակ է: Մեր ուսեալները մեզ համար երկիւղալի չեն, նոքա մեր հասարակութեան ամուր հիմքերն են: Այդ պատճառաւ մենք ամենաբարգաւոր ազգերիցն ենք»: Այսպէս վճռեց Չինաստանի քաղաքականութեան վսեմ հարցը: Այդ վճռի սկզբի վերայ հիմնուած Չինաստանի կայսեր վերջիշեալ կարգադրութիւնը: Աւելացնենք առածներիս մի բան ևս, որ, ինչպէս վկայում են լրագիրները, Չինաստանից Ամերիկայ ուղարկուած ուսանողներից աշակերտները զարմացնում են Ամերիկացւոց իւրեանց համեստութիւնով, քաղաքավարութիւնով և գլխաւորապէս իրանց մաքուր պարկեշտութիւնով Անգղիացւոց բառերի: Այսպիսի կերպով մենք տեսնում ենք, որ Չինաստանի բազմադարեայ դպրութիւնը ապարդիւն չէ եղել մարդկութեան համար, և Չինաստանցիք ունեն ներքին և արտաքին միջոցներ օգուտ բերելու մարդկութեան. ուրեմն մենք ունենք երաշխաւորութիւն պնդելու, որ վերջիշեալ կարգադրութիւնը Չինաց կառավարութեան կողմից խախտում է յաւիտենական նորանց միւսներից բաժանող պատը, և նոցա կու տայ միջոց օգուտ տալու ուրիշներին և օգուտ քաղելու ուրիշներից:

Չինաստանցիք հասկացան, որ ազգային զօրութիւնը պիտի գործէ, ծառայէ ազգի օգուտներին, չի պիտի ցրուցան լինի օտարների մէջ, որոնք այդ զօրութեան կարօտ չեն: Տասը, քսան ուսումնական Չինաստանցւոց գործունէութիւնը Ամերիկայում, միացեալ նահանգներում, մի առանձին օգուտ չէ բերելու Անգղիացիներին, բայց շատ օգուտներից կըզրկէ Չինաստանցիներին, որոնք կարօտութիւն ունեն ուսումնականների իւրեանց մէջ: Այդ պատճառով կայսեր կարգադրութիւնը պատուիրում է Ամերիկայ ուղարկուած երիտասարդներին անպատճառ ուսման ընթացքը աւարտելուց յետոյ վերադառնալ իւրեանց հայրենիքը աշխատելու յօգուտ ազգային լուսաւորութեան:

Եւ այս շատ բնական է: Մենք մի առանձին յօդուածում կ'խօսենք, թէ որքան մենք շեղուած ենք այս կանոնաւոր ուղղութիւնից:

ԱԶԳԱՅԻՆ

ԱԽԱԼՑԽԱ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Թէպէտ մօտ կէս դար է, որ Ախալցխայի Հայերը գտնւում են Ռուսաստանի լուսաւորեալ հովանաւորութեան տակ, բայց քաղաքի անհամեմատելի աշխարհագրական դրից պատճառաւ, չունենալով նշանաւոր յարաբերութիւններ Ռուսաստանի և միւս աշխարհների քաղաքների և ժողովրդոց հետ, նոցա կեանքի բոլոր երեւոյթները նահապետական հին կեանքի մի պատկերն է:

Ամուսնութիւնը առ հասարակ շատ շուտ է կատարւում այստեղ. 18—20 տարեկան պատանի Հայեր և 15—16 տարեկան պատանուհի մայրեր տեսնելը մի սովորական բան է Ախալցխայում: Նշանադրութիւնը կատարվում է առանց տղայի և աղջկայ միմեանց տեսնելուն և ծանօթանալուն և թէպէտ այս պատճառաւ ընտանեկան ներքին դժուարութիւններ, անյարմարութիւններ շատ անգամ պատահում են, սակայն թէ այրը և թէ կինը առանց բողոքանաց և դանդատանքի մինչև իրանց մահը համբերութեամբ տանում են անգութ ճակատագրի վճիռն . . :

Ամուսնութեան ժամանակ նիւթական ապահովութիւնը գրեթէ ոչինչ նշանակութիւն չունի այստեղի ժողովրդեան համար: Ամեն ծնող աշխատում է իւր որդուն օր յառաջ ամուսնացնել, որ նորա «աչքն ու երեսը տեսնի, հաւ էնէ, թառը գնէ» այսինքն ապրէ. Սրանից այն բնական հետևանքն է դուրս գալիս, որ աղքատների, անկիրթ և անպատրաստ մարդկանց թիւն օր ըստ օրէ աւելանում է:

Հարսանեաց հանդէսը վաղ 3 օր էր տևում, բայց այժմ մի օր միայն: Կերակուրների չափազանց գործածութիւնը նոյնպէս վերցրած է այժմ, բայց մինչև հիմա արաղի չափազանց գործածութիւնը, հարբած, աղաղակներով, ճանապարհին կրկին և կրկին կոնծարանելով, աղջկայ տունը «հարսնառ» և յետոյ եկեղեցի «պսակ» գնալու սովորութիւնը կայ: Հարսանիքում երգուած երգերն, երգիչներն, կատարուած կաքաւներից բոլորն էլ տաճկերէն են և տաճկական կեանքից առնուած:

Բոլոր գերդաստանը սնուցանելու, կառավարելու հոգսը այր մարդի վրայ է, իսկ տանտին կառավարութիւնը տան տիկնոջ ձեռքին է: Այր մարդիկ իրանց չարաչար աշխատութեանց և կերակուրների [illegible], իսկ կանայք յաճախ որդեծնութեան պատճառաւ շատ են հիւանդանում, թարշամում և մեռանում, մանաւանդ այր մարդիկ: Փոքր զաւակների հոգսերով ծանրաբեռնուած այրի կանայք գլխաւորապէս պարապում են այս և այն տանը «հաց եփելով» և «լուացք անելով»: Հաց թխելու համար օրական վարձն է 15—20 կոպէկ 10—15 հատ էլ «լաւաշ» հաց, իսկ լուացք անողի օրական վարձն է 20—25 կոպէկ: Բացի սրանից շատ այստեղի աղքատ կանայք և աղջիկունք մասնաւոր եկամուտներ ունին իրանց ձեռագործութիւններով - ինչպէս «զոյթան» (երիզ) գործել, «պրիշում բանել, վարդ և գոյն շինել»: Աշխատասէր կինը կամ աղջիկը կարող է շաբաթական 60—70 կոպէկ փող աշխատել այդ տեսակ ձեռագործներից:

Անդամալոյծ, կաղ, կոյր, հաշմանդամ մարդկանց և յետին անանկ գերդաստանների համար (որոց թիւը 400-ից աւելի հոգի է) Ախալցխայում կայ աղքատաց դանձանակ:

Քաղաքիս արհեստաւորները իւրեանց մէջից 2—3 տարի ժամանակաւ ընտրում են 2 հոգաբարձուներ նոյն դանձանակի համար, որոյ արդեան աղբիւրներն սոքա են:

1. Ամեն շաբաթ օր մի արհեստաւոր, հերթով ի հարկէ, երկու արհեստաւորների կամ վաճառականների հետ, ման են գալիս խանութներում և կամաւոր նուէրք հաւաքում:

2. Տարուայ 5 տաղաւարներում քաղաքի նշանաւոր անձինքներից երկուքը քաղաքում և եկեղեցում «թապախ» են ման ածում:

Այս երկու աղբիւրներից դոյացած գումարն հասնում է տարեկան 1500 րուբլու, որը երեք ամիսը մի անգամ բաժանում են աղքատներին:

Գեր. Սուքիաս վարդապետը որոշած է եղել որ մեռելների «օխթն—օրէնքի հաց», տուած սովորութիւնը վերջանայ, նրա փոխարէն իւրաքանչիւր մեռելատէր պարտաւորուած լինի «օխթն—օրէնքի հացի» համար մտածուած գումարն, որ առ նուազն 15—20 ր. է լինում, նուիրել աղքատաց դանձանակին:

Այս գեղեցիկ կանոնը բաւական ժամանակ պահուել է, բայց հիմա, ինչպէս ինձ ասացին պատուելի հոգաբարձուները, դադարեցրել է ժողովուրդը: Աղքատաց դանձանակը երբեմն նպաստում է, ժամանակաւոր կերպով, աղքատ պանդուխտ հիւանդներին և հիւանդացող խեղճ արհեստաւորների ընտանիքներին: Այս տարի Եղիսաբէթեան Օրիորդաց 6 աղքատ ուսանողուհիներին 100 ր. զգեստ է կարուած նոյնպէս դանձանակի փողով:

Թէպէտ Ախալցխայում կայ իշխանութեան կողմից նշանակուած նահանգական դահճակ, որը պատրաստ է առանց փողի էլ օգնել որդեծնութեան հիւանդ կանանց, բայց Ախալցխայում տարին առ նուազն 20—30 մանկահասակ կանայք զոհ են լինում որդեծնութեան ժամանակ մի տեսակ շատ տմարդ պառաւների (դահճակ կոչուածների) ձեռքով: Այդ պառաւները իրանց տգիտութեամբ, յանդուգն ձեռնարկութեամբ և անձնասիրութեամբ, ամեն տեսակ չարչարանք և նեղութիւն տալիս են խեղճ հիւանդին և կամ մօրն են սպանում, կամ նորածին մանկանը և կամ երկուքին էլ միասին: Որդեծնութիւնը, բնութեան այդ անխախտ օրէնքներից մինը, այս կերպով, մեր կանանց համար դարձած է մի մահու օրէնք: Չեմ յիշում մանրամասնաբար այն թէ այդ հնաւուրց պառաւները ինչ տեսակ նախապաշարմունքների սերմեր են ցանում մեր կանանց սրտերում, իրանց մանուկը այս և այն գեղերից, չար ոգիներից պահպանելու «կոխ» այսինքն անդամալոյծ չլինելու համար, երեխան պառաւին շալակը տալու և աղօթելու, մանուկը գերեզմանատուն տանելու և մի քարի վերայ կլորեցնելու սրբերի յանձնելու, փոխը բռնելու, լուսնոտ չլինելու համար երեխան լեզակելու (լեզակ քսելու) "գորշնուկ" հիւանդութիւնից ազատ մնալու համար 7 հատ դարիի հունտ կաւիցից տան որոշեալ տեղը թափելու, թաղելու և դրանց նման հազարաւոր յիմարաբանութիւններ:

Որդեծնութիւնից 3—4 օր վերջը գալիս են խումբ խումբ հիւանդին և բոլոր գերդաստանին «աչքի լոյս» նոցա կին արմատ դրացիները, ազգականները, բարեկամները և ամբողջ ժամերով սեղմուելով հիւանդի պառկած սենեկում սկսում են իրանց երկայն բարակ խօսակցութիւնքը հիւանդի հետ, ծեր կանայք իրանց ծխաքաշի ծխերով սենեակը դարձնում են «քարանթին», հիւանդի թոքերը նախ այն ծխով օծում և յետոյ իրանց ընծայ բերած «ձուածեղիների» հաստութեան և չէքէր լօխումի բրդուճներով խեղճ հիւանդին ստամոքսը ծանրաբեռնում, խանգարում և նրա կեանքը զանազան հիւանդութիւնների ենթարկում:

Իսկ Ախալցխացիներին պէտք է ասած որ նրանք երեխան ֆիզիկապէս զարգացնելու լաւ սովորութիւններ ունին, այսպէս ոչ մի մայր, հարուստ և աղքատ, եթէ նա հիւանդ չէ, ոչ երբէք յանձնառու է լինում իւր երեխան յանձնել ծծմօր: «Խանձարուր» երեխայոց մահիճը խոտով լցրած, հազար անգամ առողջարար է, քան ուրիշ ազգերի փետուրից և բրդից մահիճները «փափուկ հողը» երեխան ազատ է պահում իւր անմաքրութիւններից և խոնաւութիւնից: Ախալցխացիների այս գեղեցիկ սովորութեանց շնորհիւն է անշուշտ, որ նրանց երեխայքը առհասարակ կայտառ են և առողջակազմ, չնայելով որ իրանց կերակուրները չունին սննդարար բաղադրութիւններ և բառ մեծի մասին խմորեղէններ են: Ինչը վերաբերում է երեխայն բարոյական զարգացմանը, ցաւօք սրտի պէտք է ասած, որ Ախալցխացիք իրանց ամեն մի քայլում, ամեն մի շարժուածքում, ամեն մի խօսակցութիւնում խանգարում են երեխայի բարոյականը և նրանց զանազան մոլութիւնների դաս են տալիս:

Ախալցխացի այր մարդկանց վաճառականների զգեստը բառ մեծի մասին փոխուած է նոր Եւրոպական զգեստի, իսկ արհեստաւորների և ստորին դասի մարդկանց զգեստը մի տեսակ խառնուրդ է Եւրոպա—Տաճկա—Վրացու զգեստի: Կանանց զգեստը բոլորովին Տաճկական հին զգեստն է, որը ի բաց թողնելով մի քանի աւելորդ զարդերը, մի հրապուրիչ գեղեցկութիւն է տալիս նրանց դէմքին, բայց այս էլ կայ որ chaqun a son gout. Կանանց հին զարդերից մինչև հիմա կայ «ոսկի շէրիտ և ջէվշէկ» մարգարտեայ «կըտուց և գիլէֆլըկ» "պօղմայ" (մանեակ) «օղ» (գինդ) «ալըլէպլէկ» (ապարանջան) և մատանի: Ժամացուցի իւր շղթայով գործածելն էլ նոր սովորութիւն է, որ մտել է կանանց մէջ, ինչպէս և վաղուցուան "նալն և ճղմայի" փոխարէն "կալոշ, սափոկ" գործածելն:

Բզնունի.

ԴԱՒՐԷԺ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Մշակ լրագրի մէջ հրատարակուած սուտ տեղեկութիւնները մեր Պարսկաստանի Հայերիս մասին առիթ տուին մեզ այս անգամ խօսել նորա № 47 ում կեղծ (Նախոն ստորագրութեամբ) մի նամակի մասին:

Մշակի նամակագիրը ասում է. «Մինչև Մշակի գոյութիւն առնելը Պարսկաստանի Հայերը խաւարի մէջ էին ծածկուած, ոչ մի պարբերական թերթ նոցա վերայ չէր խօսում:

Մշակի թղթակից պարոնը երևի է իրանով սաստիկ պարապած լինելով, չէ կարդացել և չէ կարդում ոչ Մասիս, ոչ Հիւսիսափայլ, ոչ Կռունկ, ոչ Մեղու, ոչ Արարատ, և այլն:

Երկրորդ. Մշակը տալիս մի նամակ իբր Պարսկաստանից ստացած; իսկ իւր. օգնական պ. Յակոբ Միրզոյեանցը դորա հակառակ առանձին նամակով յայտնեց պ.

բաղդաւոր է երեւում . . . այնտեղ օրիորդներ յանխռնեկելով զոռով են փեսայ դառնում, իսկ այստեղ աղջկանց զոռով տանից դուրս անելով, փեսայ են ճարում . . . :

Գիտես, պ. դարբին, ախր Թիֆլիսում փեսայ չէ ճարվում . . . փեսաների թանգութիւն է. մի փեսացուն հազար թուման արժէ . . . . իսկ եթէ փոքր ինչ էլ բարձրահասակ է, գինը բոյին համեմատ աւելացնում է . . . բայց երբոր ինքն էլ մի չայ փող ունէ, հինգ հազար թումանով տաքը չի փախի . . . : Ինչոր վերաբերում է ուսեալներին, նոքա չափազանց անաչառ են, շահասիրութեան մի նշոյլ չունեն խեղճերը, բայց երբեմն միայն . . . . մի լաւ դէպքի են սպասում . . . : Իսկ դու, պ. դարբին, խորհուրդ տուր և ձեր Մելիքի չարագործ փեսացուին Թիֆլիս գալ, հազար թումանը առաջ է . . . դորա չարագործութիւնը այս տեղ բարեգործութիւն կը համարվի, մանաւանդ որ այստեղ էլ այդ նպատակաւ օտար երկիրներից եկածներ շատ կան . . . . հազարաւոր թումանների ձայն են լսել . . . :

Սակայն չկարծես, պ. դարբին, թէ Թիֆլիսում ամենքն էլ իւրեանց աղջկանց հազարներ են տալիս . . . . չէ, ով ունէ խօ տալիս է ու . . . «փառք Աստուծու» է ասում . . . իսկ ով չունէ, մեղաւորը նա է . . . նա առանց դատաստանի պիտի դատապարտուի . :

Ո՞վ է դատաւորը:

Մի՞թէ արդարութիւն քարոզող ուսեալները:

—Ոչ, հէնց նոքա են աչքը խուփ արած տանում հազարները . . . :

Հարուստները՞:

—Ոչ, ...

Աստիճանաւորները՞:

—Ոչ, ...

Ուրեմն ո՞վ է դատաւորը:

—Ես քեզ կասեմ, պ. դարբին, դատաւորն մի ամիր—փողը:

Այո, փողն է առաջին արժանաւոր դատաւորը, որ հարսի ու փեսայի մեղքերը փառատում է . . . . :

* * *

Բայց հարսանիքների օրերը . . . բարեկենդանները անցկացան լուռ ու մունջ, առանց մի օր և լոյծ խնդութեան . . . : Խնդացին միայն այն փեսաները ու հարսերը, որոնք դոհ լինելով հազարաւոր թումաններից արժանացան այդ բաղդին, իսկ սուգ արին նոքա, որոնց հազարաւոր թումանները խանդարեցին պսակուելու: Եւ ահա կանգնեցաւ մեծ պաս—հասաւ ապաշխարհութեան օրերը, երբ վերջապէս մեր բարեպաշտ ժողովուրդը, որ ամբողջ տարի եկեղեցու շեմքը չէ կոխել, զգալով իւր մէջ աստուածասիրութեան եռանդը, կըցանկանայ մաքրուիլ մեղքերից ու ամենայն օր այցելութիւն անել Աստուծոյ տաճարը, որտեղ սրտաշարժ ու կանոնաւոր երգեցողութիւնը և վայելուչ կարգապահութիւնը անշուշտ կը զարգացնեն նորա փափագը դէպի եկեղեցին և սէր դէպի հոգևորական դասը . . . .

* * *

Յայնժամ, ով երջանկութիւն, մեր ազգակիցների հոգիքը արժանի կը լինին դրախտի տեսութեան . . . յայնժամ նոցա համար առաւել մեծագոյն ապարէզ կըբացուի. նոցա հետաքրքրական թղթակցութիւնը այն կեանքից կըստանայ առաւել ազդիչ և աննման կերպարանք . . . յայնժամ և մենք, կարճատև աշխարհի բնակիչներս, յաւիտենական աշխարհը կուսումնասիրենք «Մշակի» օգնականութեամբ և գուցէ սա, հաղորդակցելով դժոխքայինների և դրախտացիների հետ, այնտեղ էլ իւր համար բաժանորդներ գտնէ : . . յայնժամ անշուշտ նորա էջերում կըկարդանք, թէ որքան դրախտաբնակ ունէ դժոխքում, որքան դրախտում, ըստ սովորութեան . . . . :

* * *

Միայն . . . լռիր, ընթերցող, ես մի բանի մասին շատ եմ մտածում : . . չլինի թէ այս աշխարհից այն աշխարհը նոքա են միայն գնում, որոց կենսագրութիւնը «Մեղուի» մէջ է տպվում . . . չէ որ գիւղի քահանան այդպէս է ասում . . . (տես Մշակ լր. № 6):

Սպասիր, անհամբեր քահանայ, գնա ժամանակ ունես սպասելու . . . Մշակը մեզ համար դժոխքից լուրեր է բերում, անշուշտ նորա այնտեղի թղթակիցը առաքինի կեանք և լի բարոյականութեամբ սեպհական վարք ու անշահասիրութիւն ունենալով, շուտով կուղայ և դրախտ, որտեղ կըգտնէ իւր բարեկամ խմբագիրներին ևս, որոնք քարոզելով մտքի ազատութիւն և մարդու համարձակ յարգելը, խառնված են նոցա հետ, որոնք իրանց համար խոհ և համակարծիք չեն. կըգտնէ նոցա, որոնք գիւղացիների վերայ ծիծաղելով, իւրեանց հայրենասիրական մեծարումն «գրաւոր» և «վերանական» կոչումներով. կըգտնէ նրանց, որոնք իրանց նպատակին հասնելու համար խարդախութիւնը սուրբ միջոց են համարում, անշուշտ այնտեղից նա կըյայտնէ, թէ և Նապոլէոն III մահի ստուգութիւնը . . . : իսկ եթէ ոչ, յայնժամ դու, որպէս կասկածաւոր անձն, գուցէ չըհաւատաս, որ

ՉԱՔՈՒՃԸ ՄԵՌԱՒ:

Այո, Չաքուճը մեռաւ, և քեզ հաւատացնելու համար ստիպուած եմ ահա նորա կենսագրութիւնը ներկայացնելու . . . :

Չաքուճը ծնաւ 18 . . թուականին Թիֆլիսում, արբեցու Թուսիի բազարում. իւր կեանքի ժամանակ շատ չար ու բարի տեսաւ և ահա վախճանեցաւ ծաղկահասակ հասակում:

Բայց ողորմած հոգի Չաքուճը այն մարդկանցից չէր, որ մեռնէր անդառնալի, զրկելով իւր համակրող ժողովուրդը օգտակար գաղափարներից . . . ոչ, նա այն մարդկանցից էր որ մահից յետոյ առաւել հաչակվում են իւրեանց գործերով . . . նա ուզեց դարձեալ միխիթարել մեզ, և ահա նորա բարեպաշտ ու ճշմարտասէր հոգին, ըստ եգիպտական հոգեփոխութեան մտաւ պ. Աշխացու մարմնոյ մէջ. իսկ մարմինը Թիֆլիսի փողոցների տեղ, այժմ թափառելով դժոխքի բոլորի չորս, պարտում է այնտեղ իւրեան համակրող մարդիկ, իւրեան գնահատող հասարակութիւն և չէ դադարում հաղորդակցութիւն ունենալ մեր աշխարհի հետ . . . . նա շարունակում է զբաղեցնել մեզ նամակագրութիւն անելով իւր հոգու (Աշխացու) հետ:

Իսկ Չաքուճահոգի Աշխացին դարձեալ թափառելով մեր աշխարհում, պիտի հանդիսանայ այս տեղ, անկասկած, հին յատկութիւններով, անձնազոհ մշակութեամբ, գեղեցկաճաշակ դրուածներով և յառաջադէմ գաղափարներ տարածելով . . . .

Քաղքցի:

Ա. Աւթանդիլեանցին, թէ այդ նամակը բոլորովին Պարսկաստանից չէ եկած:

Երրորդ. յօդուածագիրը ասում է „Երևանից Արժանապատիւ Հայրը կամենալով ծածկել Պարսկաստանի մէջ կրօնափոխութեան տարածվելը վերջ է բերում բարեկարգ ցանոր փոքրաւորի ասած վկայութիւններին:

Մարաղու ժողովրդականներից այստեղ եկած պատգամաւորները գրաւոր պահանջելու աւելն յայտնեցին, թէ Մըշակի մէջ տպագրած լուրը զրպարտութիւն է և բոլորովին սուտ և թէ միայն երեքը հակամէտ էին դէպի կրօնափոխութիւն, բայց նոքա էլ այժմ իրանց եկեղեցու գիրկը մտած ատում և գայլ են անուանում նոցա, որոնք նոցա կամենումէին կրօնափոխ անել:

Չորրորդ. Մարաղու կրօնափոխ Հայք անելով, երեք Հակամիտ անձի փոխանակ, յօդուածագիրը կամեցել է իւր նամակին ոյժ տալ և նորանոր ապացուցութիւններ անել իւր ընթերցողների վերայ: Նախ ինքը յիշում է նոյնպէս իբր թէ մի խումբ մահասիլ (վիրաւորութիւն գործող անձինք) էր գնացել այդ բանի համար: Թող նորի մէջ պարոնը իրան համոզեցնելու թէ այդպիսի անորոշ խօսքերը երևակայութեան ծնունդ են, որովհետև պարոնի յիշած մահասիները երկու անձինք էին պարոն Աբրահամ Յովհաննիսեանի առաջնորդով Պարսից առած փողերը ստանալու համար: Թող ուրեմն Հանգստանայ պարոնը, որ մեր երկրումը երևակայական խռովութիւնները տեղի չունին: Թող Պարսկաստանի մասին սխալ տեղեկութիւններ հաղորդող պ. Նազինը այլևս Ատրպատականի կրօնասէր Հայերին կրօնափոխ չանուանէ:

Պարոն Րաֆֆին Մշակի № 50-ում ասում է թէ Ուրմիոյ կանայք, որոնց ամուսինները բացակայ են, խնդրեն են տալ Հոգևոր Առաջնորդին Նշանաւոր կաթողիկոսից կրկին ամուսնանալու արտօնութեան կոնդակ բերել տալու, եթէ որ նոցա բացակայութեան եօթը տարին լրանայ:

Այդ ամուսնալուծութեան գաղափարը անհասկանալի է եղել միշտ Ուրմիոյ կանանց և անհասկանալի է ներկայումս:

Խ. Գրիգորեանց

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

„Ցեան ընդառաջ,, որ Նախիջևանցիք ասումեն „գնալու դուռնը,, կատարվումէ մի քանի սնոտիապաշտութեամբ, որ Նախիջևանցիք իրանց պապերից ընդունած աւանդութեամբ կատարումեն:

Երբ սկսումէ երեկոյեան ժամերգութիւնը, ժողովրդից ամեն մինը ըստ սովորութեան առնումէ մի հատ մեղրամոմ և վառած բռնումէ եկեղեցում, իսկ այն երիտասարդները, որք պսակված են լինում այդ տարույ ընթացքում կանգնումեն նոյնպէս վառած մոմերով միայն իրանց հետ միասին:

Երբ աւարտվումէ երեկոյեան ժամերգութիւնը ամուսինները մոմերը վառած գնումեն դէպի իւրեանց տները, աշխատելով չհանգցնել մոմը և եթէ պատահեցաւ, որ մոմը հանգչումէ, իսկոյն վառումեն իւրեանց հետ գնացող ընկերի մոմից: Վայ այն մարդուն, որի մոմը հանգչելուց յետոյ չկայ մինը, որից նա վառէր: Այն ժամանակը նա գլուխը քաշ գցած տխուր և դանդաղ քայլերով գնումէ դէպի տուն մրմնջալով քթի տակ, թէ „ես մեղաւոր գտնվեցայ Աստուծոյ առաջ և նա ինձ պատժեց:,,

Երբ այս տեսակ հանդիսով հասնումեն տուն, իւրաքանչիւրը իւր տան Ճրագը վառումէ իւր հետ բերած մոմով, որին նոքա ասումեն ցեան ընդառաջի մոմ: Տան Ճրագը վառելուց յետոյ ցեան ընդառաջի մոմը ձեռքին բարձրանում են կտուրը, ուր պատրաստած է լինում եղեգների խուրձերից մի դէզ: Այդ դէզը վառումեն ցեան ընդառաջի մոմով ու ապա մի կողմից սկսումեն հրացանաձգութիւնը և հրախաղութիւնը, իսկ միւս կողմից նորափեսաները և նորահարսները ձեռք ձեռքի տուած թռչումեն մի քանի անգամ վառած կրակի շուրջը: Երբ այդ վերջինները աւարտումեն իրանց թռչելը կարգը հասնումէ գերդաստանի միւս անդամներին:

Մի երկու տարի առաջ սովորութիւն կար և եկեղեցու կտրան վերայ վառել գամիշների կոյտ, բայց յաջորդներից մինը հրամայել է, որ այսուհետև չվառեն. ասելով թէ եկեղեցին կարող է կրակ ընկնել:

Մի քանի ժամից յետոյ նոքա նստումեն կրակի բոլոր ի շուրջ և սկսումէ ընթրիքը: Ընթրիքը վերջացնելուց յետոյ գերդաստանի մեծը թէ այր լինի և թէ կին, պըրումէ իւր գօտի ծայրը, որ նշանակումէ թէ զօրանալ կապանքին կամ խոզան կը ջնջուին տան մէջ եղած ոջիլները:

Սորանից յետոյ բաժնել կրակը տանումեն և ածում իրանց թոնիրը, ասելով թէ մեր թոնրի կրակը ուշ կը հանգչի:

Եթէ պատահի, որ մի որ և իցէ տան մէջ լինի հիւանդ նոյն իսկ ցեան ընդառաջի գիշերը, կծածկեն նորա երեսը վերմակով, կդնեն մի ամանի մէջ ջուր, կը բռնեն նորա հիւանդի անկողնի վերայ և վառելով ցեան ընդառաջի մոմը կը կաթեցնեն մի քանի կաթ ջրով լիք ամանի մէջ և երբ մոմը ցրուելով կազմումէ ջրի երեսին բոլորակաձև շրջաններ և կամ զանազան ձևեր ապա նոքա մի խորը գննողութիւնից յետոյ մոմի զանազան տեսակ ցրուելը ջրի երեսին նմանեցնելով միոր և իցէ գազանի կամ կենդանու, ասումեն թէ երեխան վախեցել է այս ինչ կենդանուց, գազանից:

Այս անումեն նոքա միայն այնպիսի հիւանդների վերայ, որոնց հիւանդութիւնը տենդ չէ, այլ մի ուրիշ հիւանդութիւն: Բայց եթէ հիւանդը բռնուած է տենդով, նորա հետ վարվումեն բոլորովին այլապէս կապումեն հիւանդի երկու կռան տակից թոկ և յետոյ նոցանից մէկը թոկը ձեռքին կանգնումէ կտրի վերայ դրնուած առանձին մի ծակի մօտ, որին անուանում են հերթիկ (*) ու սկսումէ քաշել դէպի վերև հանել Նորան կտուրը, յետոյ խրումէ հիւանդի ոտները հերթիկի մէջ և կրկին անգամ վայր թողնում ներքև:

Այս տեսարանը կրկնվումէ երեք անգամ և դորա կատարողները համոզվումեն, որ իւրեանց հիւանդը անպատճառ պէտք է առողջանայ:

Մ. Տէր Սարգսեանց.

ՀԱՄԶԱՉԻՄԱՆ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ», Լրագրի)

Ըստ Հասարակ Բամբակու ձորի գիւղերից մեծ մասումը գտնվում են, եթէ ոչ չինական ուսումնարաններ, գոնէ քահանայի դասեր, ուր սովորում են մի քանի երեխայք և ամփոփվում են մնթեր: Այս վերջին ձևը երևումէր և Բօզի գիւղումը: Երեք—չորս տարի է, որ Բօզի գիւղացիք փորձ փորձեցին ունենալ չինական ուսումնարան, ուսուցիչ հրաւիրեցին, իւրաքանչիւր տարուայ հարկաւոր ռոճիկը բաժանեցին բնակիչների վերայ, բայց շուտով ցամաքեց այդ աղբիւրը, ըստ որում երկպառակութիւնից շատերը հեռացան, արդարացնելով իւրեանց անձը նրանով, որ նոքա որդիք չունենալով, պարտական չեն փող տալու այլոց որդկերանց դաստիարակութեան համար:

Մի կամ երկու տարի առաջ Ալեքսանդրապօլու Հոգևոր կառավարութեան անդամներից մինը գալով Բօզի գիւղ և տեղեկանալով գործի դրութեանը, առաջարկեց բանալ ստորագրութիւն ուսումնարանի պահպանութեան: Բայց առաջարկութիւնը ուրախութեամբ է ընդունվում, ըստ որում դա ստորագրութիւն է և ոչ փող պահանջել: Հասարակութիւնը լուսաւորութեան եռանդով լցուած, ոչ որ չէ կամենում յետ մնալ այդ ազնիւ գործից և իւրաքանչիւր մարդ աշխատում է շուտով գրոշել իւր ազգանունը ստորագրութեան թերթի վերայ, դէմը դնելով, նոյնպէս անխնայ, գրոշած գումարի քանակութիւնը: Ընդհանուր գումարը այդ ստորագրութեան հասնում է այժմ մօտ 900 ռուբլի, բայց գանձապանում չկայ և ոչ մի կոպէկ:

Յակոբ Մանինեանցը—գիւղի հարուստ առաջաւորներից մինը—անցեալ տարի կազմեց մի մասնաւոր ուսումնարան իւր գերդաստանի երեխայոց և այլ մի քանիսների համար: Այստեղ ևս այս ձեռնարկութիւնը ընթացք չառաւ մի քանիսների անտեղի ժլատութեան պատճառաւ:

Յակոբ Մանինեանը, գործի ընթացքին համաձայն վարվելով, բոլորովին հրաժարվեց այս տարի հասարակութիւնից և ինքն իւր տան մէջ իւր սեփական գերդաստանի համար կազմեց մի ուսումնարան, հրաւիրեց տարեկան 120 րուբլիով մի երիտասարդ ուսուցիչ Հառիճայ վանքի աշակերտներից և այժմ այդ ամբողջ գիւղի միակ ուսումնարանի մէջ ուսանում են 6 տղայ և չորս օրիորդ, որոնք լիովին պատկանում են Մանինեանցի գերդաստանին:

Վօսկրեսենկոյ և Նիկիտինկոյ ռուս գիւղերը նոյնպէս մտածում են իւրեանց որդկերանց դաստիարակութեան վերայ: Իւրաքանչիւր գիւղումը ամեն ձմեռ ուսանում են մօտ 25 երեխայ: Նոցա ուսուցիչը լինում է ռուս. նոյն գիւղի գրագիրը, որը ուսուցչութեան համար ստանում է իւրաքանչիւր աշակերտներից 3 րուբլի ամբողջ ձմեռուայ համար:

Փոքբերեանց:

(*) Ծանօթ. Շատ սակաւ տուն կլինի Նախիջևանում, որ չունենայ հերթիկը:

Վրաց «Դրոէբա» լրագրում կարդում ենք, որ Ախալցիխայի արհեստաւորները ներկայացրել են Վիեննայի աշխարհահանդէսին տեղային զանազան ոսկեայ իրեր, սփառցներ, շամփուրներ և այլն, նոյնպէս և արծաթից և ոսկուց գործած նիւթեղներ:

—

Դուրս եկաւ Պ. Երիցեանցի հրատարակած «Кавказская Старина» օրագրի 3-դ համարը: Նշանաւոր յօդուածներ այս համարի մէջ են 1797 թ. Թիֆլիսում եղած ժանտախտի մասին և Գէորգ XII վրաց թագաւորի Հայոց Սուրբ գեղարդի կալանաւորելու մասին: Եփրեմ կաթողիկոսի նամակը իշխան Ա. Ն. Գոլիցինին:

—

«Արշալոյս Արարատեան» լրագրում կարդում ենք որ Ռուսաց կայսեր եղբայր Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկողայոսը Գահիրէից անցնելիս, ուր Քասր-Նուզա կոչված փոխարքայական պալատում իջևանել էր, Եգիպտոսի Առաջնորդ գերապ. տէր Միքայէլ արքեպիսկոպոսը պատիւ է ունեցել այցելութիւն անելու Նորին Կայսերական Բարձրութեանը և շնորհաւորելու Նորա ողջամբ Եգիպտոս հասնելը: Մեծ Իշխանը շատ սիրով ընդունել է Եգիպտահայոց հոգևոր Հովիւը և բարեհաճել է մի քառորդ ժամի չափ տեսութիւն անելու նորին սրբազնութեան հետ, որից շատ գոհ է մնացել:

—

Երևանից մեզ հաղորդում են, որ անցեալ Դեկտեմբեր ամսում Թատրոնասէր երիտասարդները ներկայացրել են «Արշակ երկրորդ» ողբերգութիւնը յօգուտ Պետերբուրգի համալսարանի մի չքաւոր ուսանողի, որի մասին գրած են եղել այնտեղից Խորէն վարդապետ Ստեփանէին և որի յորդորանօք կայացել է ներկայացումը: Խաղարկութեան կառավարութիւնը ջերմ եռանդով յանձն է առել պ. Սմ . . . եանցը որի մօտ գտնվում են և ժողոված փողերը: Բայց մի քանի մեզ գարմացնում է, որ վերոյիշեալ եռանդոտ երիտասարդը ոչինչ հաշիւ չներկայացրին: Եւ Պետերբուրգից ստացած նամակները ցոյց են տալիս, որ օրէցօր սպասելուց, թերահաւատում են այդ ներկայացումից ժողոված փողի մասին:

Արդեօք ինչ սկզբունք է ստիպում պ. երիտասարդին այդպէս վարվել ուրիշի սեփականութեան հետ, այդ անհասկանալի է մեզ:

—

Մեզ գրում են, որ Էջմիածնայ մօտ եղած մեծ տրտատակները, որոնք այնքան մեծ օգուտ էին տալիս վանքին և տալու էին ապագայումն, ստացել են թուրքերը այդ հայցը քննող դատաւորների վճռով: Ասում են դորա պատճառը այն է եղել, որ ծառայողներից մինը ոչնչացրել է նոցա դաւալանը: Միթէ այդքան թեթևացել է ազգային սեփականութեան պաշտպանութիւնը:

—

Երևանու Ս. Սարգիս եկեղեցու տօնին Խորէն վարդապետ Ստեփանէի քարոզ տալու ժամանակ Ս. Առաջնորդը վարագոյրը բանալ է տալիս և ժամասացութիւնը շարունակելով արգելել է քարոզի շարունակութիւնը:

Հետաքրքրելի է իմանալ թէ ինչն է ստիպել Ս. Առաջնորդին այդպէս վարվել:

—

Մեզ հաղորդում են Ղզլյարից, որ տեղական թատրոնական խումբը, որ կազմուած է հայ երիտասարդներից, քանի մի անգամ ներկայացումներ են տուել Ղզլյարայ աւանին թատրոնում: «Թէկուզ պատառիկ, պլաւ պատիկ» յօգուտ Օրիորդական դպրոցին. Ներկայացրել են տեղական դպրոցի երրորդ դասատան աշակերտները շատ յաջողակ կերպով, առաջնորդութեամբ պ. Գէորգ Միրզոյեանի, և „Սկանաւել" կամիդիան, ֆրանսերէնից թարգմանած: Ժողովուրդը մեծ սիրով և ծափահարութեամբ ընդունել է այս երկու խաղարկութիւնը: Ծախքերը դուրս գալով, այս ներկայացումից մնաց 100 ռուբլի:

—

Մի և նոյն քաղաքից մեզ հաղորդում են, որ ամսոյս 5 տեղական երկսեռ դպրոցի հոգաբարձուք պ. պ. Գ. Միրզոյեանը, Արտաշէս Սուքիասեանը, և ամենը ուսուցիչք ծխական դպրոցի այլև տիկին Թամար Կաճաճեանը, օրիորդ Մարգարիտ Աղանեանը և օրիորդ Աննէն Գուլգեանը. պիտի ներկայացնէին „Նինոյի նշանը", „Բժիշկներ" թարգմանութիւնը և Հաշտարխանու Հայերի կեանքից մի վոդեվիլ „Արտեմ Բաժանիչ," նոյնպէս յօգուտ օրիորդական դպրոցի:

—

Տեղեկանում ենք, որ այս տարուայ սկզբներից սկսած Թիֆլիսում հայ տիկնայք և օրիորդք պիտի հրատարակեն Հայերէն լեզուով մի ամսագիր: Ամսագիրը կը պարունակի իւր մէջ հինգ թերթ և դորա տարեկան գինը պիտի լինի 5 ռուբլի:

—

Կիւրակի գիշերը, հայ դերասանները ժողովրդի խնդրանօք ներկայացրին հանգուցեալ Մ. Տէր-Գրիգորեանի „Խոստովանանքին խոստովանանք" կոմէդիան և Ջաւէտը:

ՆԵՐՔԻՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Ալէքսանդրապօլ փոքր նորաշէն քաղաք է, երկու սարերի մէջ տեղաւորված, այսինքն Ալագեազ և Գարաղաչ անուանեալ սարերի փէշին, դաշտի վերայ: Ալագեազ սարերի վերայ, ամառուայ ժամանակը, այլազգի Թուրքերը, քրդերը գալիս են եայլաղ բոլոր իւրեանց տաւարով, մալով, ոչխարով, տնով տեղով և ցուրտը ընկնելիս, ձմին գալիս, գնումեն կրկին իւրեանց դաշտերը, գիւղերը: Իսկ Գարաղաչ անուանեալ սարերի վերայ գալիս են Թուրք, Քրդեր, Թարաքամայ և Հայ: Ով ոք տաւար, ոչխար ունի արածելու այստեղ բաւականութիւն է ստանում և ձմեռը վերադառնում իւրեանց տեղերը:

Այս սարերի փէշին դաշտի վերայ, ինչպէս ասացի, հիմնուած է ապահովուած Ալէքսանդրապօլ: Քաղաքի տները շինուած են սև. հասարակ կաւով սև հանքի սրբատաշ քարերով: Ամառն շատ հով է, ծառ չի բուսնում, որովհետև տեղը ցուրտ է, պտուղ չի տալիս, ծառերն շուտով սառչում են և չորանում, բայց բոստանի ամենայն տեսակ բերքեր, այսինքն կաղամբ, տարխուն, համեմ, պղպեղ, աճառ օթխ, մաղդանոս, բադրջան, վարունգ, բողկ, ճակնդեղ, գետնախնձոր և այլն շատ կան:

Ձմեռը սաստիկ ցուրտ է և 6—7 ամիս կանէ: Շրջակայ քաղաքներից և գիւղերից բերում են քաղաք ամենայն բարիք, ուտելիք, խմելիք վառելիք և հագնելիք. այսինքն Խըլթըղուց` տանձ, խնձոր, խաղող և վայրի տանձ. Ախալցխայից նմանապէս կեռաս, ծխախոտ, խնձոր, նաշմի. Լօռուայ գիւղերից գործի, փայտ, մեղր. Երևանից բրինձ, չիր, սոխ, սեխ, դուլթմայ, ձմերուկ գինի, չամիչ, խաղող: Թարաքամաները Ղազախից Բօրչալուից պանիր, բուրդ, ձմերուկ, կարագ, Սևանայ ձուկը, հաւկիթ: Ղարսայ գիւղերից գերան, ալիւր, ցորեան, գարի, խոտ, կտաւատ, ձէթ, աթար, թել, քուրջ, տաւար, ոչխար. Ախալքալաքի գիւղերից գերան, տախտակ. Թիֆլիզից սապոն, նաւթ, մոմ, խաւիար, չոր ձուկը, հագնելիք, ամենայն տեսակ կախէթու գինի: Նխարբէթօպօլից երկաթ, շէր. և մերձակայ գիւղերի հողագործները բերում են ալիւր, գարի, խոտ, եղ, մածուն, կարագ, սեր, Հաւ, ձու, Հաւկիթ, խոզ, բադ, Հնդուհաւ և առհասարակ դաշտի բերք` դոխ, բոխ, ուղմակոճ, եղինջ, պանձ և այլն:

Ալէքսանդրապօլի բնակիչները զանազան տեղերից են. 40 տարի առաջ կլինի, որ Պասկևիչի յաղթութեան ժամանակ այս երկիրը ընկաւ ռուսաց իշխանութեան տակ: Հայերն եկել են Արզրումից, Ղարսից, Բայազետից և այլ տեղերից: Բնակիչները 5000 տուն Հայ է լուսաւորչադաւան նոյն թւում հաշվում է և 200 տուն Հայ կաթոլիկ, Ֆրանսիացի Օժէն Սիւի դարձրածներից, որոց խոստովանութիւնը, եկեղեցական կարգադրութիւնը, շարականը բոլոր մի և նոյն Հայերէն է. 200 տուն ևս ուռում որ նոյնպէս Հայերէն կխօսեն. 100 տուն տաճիկ Ղզլբաշներից, պարսիկներից, որոնք նոյնպէս կիմանում են Հայերէն խօսել:

Այս նորաշէն քաղաքն 4 եկեղեցի ունի Հայոց, մի եկեղեցի Հայ-կաթոլիկների, 2 եկեղեցի ռուսաց և ուռումներուն. 1 Թուրքաց մզկիթ տաճկաց միայն: Հայոց մէկ նորաշէն մայր եկեղեցի կայ, որի նմանը երևելի քաղաքների մէջ էլ չի գտնուել. նա շինուած է Անի մայր եկեղեցու ձևով Հայկական ոճով:

Այստեղի Հայ հասարակութիւնը շատ խիստ է պահպանում հին աւանդութիւնները, Հինգ նաւակատեաց և բարեկենդան Հանգստեան օրերը, այսինքն Ջօրհնէք Ջատիկ, Աստուածածնի, Խաչի և Խաչ վերաց օրերն ժողովուրդը ժամից յետոյ իւրեան համար պատրաստութիւն է համարում անհրաժեշտ ամեն տուն մտնել գալ այն օրվայ տօնը շնորհաւորելու: Նոյն օրերը ամենայն տանը սեղան է պատրաստ. հիւրերին մեծարում են սեղանի, հիւրը գինի, օղի խմելով և բաւականութիւն ստանալով յետ դուրս է գնում, և նոյն հերթով գնում է ուրիշ տուն: Վերջնական տօների երկու շաբթի օրն առաւօտը, դեռ լոյսը չբացուած, առաւօտեան ժամին կսկսեն, պատարագը կէս կլինի մեծ բազմութեան ներկայութեամբ: 9 ժամին ժամասացութիւնը աւարտվում է, նոյն օրը ծեր մարդիկ, երիտասարդք, պառաւնք, կանայք, օրիորդք, մանկունք, երեխայք գրկած, խառնած, բարուրի մէջ փաթաթած ճաշակվում են: Կէս օրից յետոյ խումբ խումբ կանայք, տղամարդիկ, ծերեր երեխայք անց են կենում փողոցից բազարի մէջ, գնում են Հանգստարան, որին էջ-բառ է ծածկոց, որին դաղփայ, որին շալ, չարսաւ, որին պալտօյ, կուրտչիկայ հագին: Հանգստարանում ժխոր, լիլոյ, լաց, սուգ, շեփոր է բարձրանում: Քահանան, մէկ պատանի տիրացուի ձեռքին բուրվառը և շուրջառը տուած, շտապում է գերեզմանատուն փող վաստակելու: Դամբարանը օրհնում է այս մեռելի, այն մէյդանի, բոլորեցունց սկրօր շաճում. կարգը կառապում. Ժողովուրդն էլ չափեաց չափ վարծ է տալիս ճանապարհի բերանը, որով ոկտք է բազմութիւնը անցնի, գալիս են կինոց աղբրք, որը քթոցով խնձոր, խուրմա, ֆնդղ, չամիչ, սեխի կուտ ծախում, դուքան բաղար բերում, սարքում։ Այստեղ ծղծղոց, բղաւելը են մնում, կարծես թէ բոլոր Ալէքսանդրոպօլը գժվել է, եւեղ է մէկ առանձին տեսարանի համար. երբեմն էլ կռիւ է պատահում, կենտուները լրող ծեծում։

Կանայքը, որ մէկը այս քարի վերայ դոնգ եղած 5 կամ 10 տարուայ մէյդանի վերայ բոց ըլում, որ մէկը միւս քարի վերայ ացում, մէկը գլուխը ծեծում, միւսի սիրտը գնում։ Այն կողմն էլ երիտասարդները դաշտի վերայ ձիանիրով հաւաքվում են ջիրիթ են խաղում, ձիանը չափ գցում, լրար փորձում են, մերթ մերթ էլ պատահում է, որ ձիուց վայր են ընկնում, գլուխը պատռում ճեղքում, կամ ձին ձիուն զիբնում երկուսն էլ վայր են ընկնում, մահի դուռն են հասնում։

Երեկոյան զանգերն տալուց տեսարանը վերջանում է, բազմութիւնը խառն ի խուռն վերադառնում է տուն։

Որ մէկ տարայ տայ, որ ուզում է ամուսնանալ, հանգամանքը կարելի է տեսնել, ուզած օրիորդին հաւանել կամ չհաւանել։

Ուրիշը եղաւ թէ չէ, որն որ զինեմը է, կերթայ շիրախանէն, թէի, օղի է խմում, մերթ տղերանց մէջ կռիւ է ընկնում, կամ գնում են զախլանայ, ուր սաղանդարներ են նստած իրանց սազն ու քամանչէն ածում, ծնդգացնում, եւ կող, նղատողները նրանց առանջ գնում. Ժամանակ առ ժամանակ էլ թաբաղ են բերում, որ քան բաշխեն սաղանդարին, այսպէս մինչև կէս գիշերը այնտեղ նստած է ժողովուրդը։

Առաւօտը չլուացած, դեռ դոշէկի մէջ տան մեծը, հայրը, հրամայում է կնոջ քան պատրաստել ուտելու։ Պատուէր տան տիկինը քունջ ու պուճախ է ընկնում, թէ պահած բան ունի, եղից, մեղրից, պանրից, ձուից, կրակը վառում է թոնրի մէջ կամ թաղարի վերայ և խաշ է պատրաստում գերդաստանի համար։ Այս թէ կշտանալուց յետոյ ամէնքը վեր են կենում անգիրիզը. երեսները լուանում և գործի գնում։

Գ. Տէր Դաւթեանց.

Փետրուարի 10-ին շաբաթ օրը մի կալանաւոր, որին երկու զինուոր—մինը առաջից—միւսը ետեւից—տանում էին նահանգական դատարանը, Հավլաբարի կամուրջի վերայ սաստիկ քամի ժամանակ յետ գցելով իւր քայլերը բաւականին հեռանում է առջեւը գնացող զինուորից, շուտափոյթ վեր է առնում իւր վերարկուն (շինելը,) գցում ետեւից եկող զինուորի վերայ և ինքը փախչում։ Ասում են, որ բռնել են արդէն այդ փախստականին։

«Рус. Миръ» լրագրի ասելով Դոնի գաւառների երկրում Ուստմեդվեդեցկի աւանում պօլիցիականներից մինը—կրօժանինի ազգով—նորերումս գտել է մի ամբողջ գործարան հարիւր մանէթանոց կեղծ թղթադրամի վերջին տեսակից շինելու համար։ Գտան այդ գործարանը իւր բոլոր գործիքներով, մեքենաներով և աշխատաւորներով։

Յունվարի 20-ին առաւօտը հեռագիր են ուղարկել Նոր—Նախիջեւանից «Бирж. Вѣдомос.» խմբագրութեանը, որ այն տեղ—Նախիջեւանում—գտան կեղծ թղթադրամներ շինողներին։ Դորա աւելի մոտ քննութիւն է լինում և մասնակիցներից շատերին բռնել են։

Խարկով քաղաքումն էլ բռնել են մի քանի հրէաների, որոնք տարածելիս են եղել հարիւր մանէթանոց կեղծ թղթադրամներ նոր ձեւի։

Պետերբուրգում մի տարուայ մէջ եղան 128 ժողովրդական դատախօսութիւններ և այդ բոլոր դատախօսութեանց մէջ ներկայ է եղել 35,000 մարդ. որոնց 85% եղել են մշակներ։

Պետերբուրգի կայսերական հասարակական մատենադարանում 1872 թուականի Յունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 24-ը կարդալու սենեակ վիտողների թիւը հասել է մինչև 80,285-ին. կարդալու համար տեղ չկայ։

«Одеск. Вѣст.» հաղորդում է, որ Ակսայի աւանում Դոնի գաւառների երկրում գետի եզերքում գտել են ոսկու նշաններ։ Թղթակիցը աւելացնում է, որ լեռնային դեպարտամենտը թոյլ է տուել գտողին երեք վերստի տարածութեամբ շարունակել իւր հետազօտութիւնը և ոսկու լուացութիւնը։

«Кіевлянинъ» լրագրի մէջ գրած էր հետեւեալ լուրը. Մի յղի կին դուրս եկաւ տնից. ճանապարհին նա զգաց ծնելու հարկաւորութիւնը. նա գտաւ տարանան մի կալուածատիրոջ տանը, որտեղ և ծնաւ։ Կալուածատէրը տուեց նորան տասը մանէթ։ Այդ կինը գալով խասու գիւղը խնդրեց մի գիւղացիից, որ գիշերը նորան թոյլ տայ, իւր տանը գիշերելու։ Խօսակցութեան ժամանակ ծննդականը պատմեց, որ իւր մօտ մի քանի մանէթ փող ունէ։ Գիւղացին այդ բանը իմանալով մտքումը դրեց նորան սպանել, և փողերը յափշտակել։ Գիշեր ժամանակը նա սկսեց տան մօտ մի փոս փորել, այդ բանը գիւղացու կինը տեսնելով հարցրեց իւր մարդուն փոս փորելու պատճառը. մարդը ասաց ջուր հաւաքելու համար եմ փորում։ Մինչև նա փորում էր փոսը նորա կինն և ծննդականը քնեցին։ Ծննդականը դրեց իւր որդուն վառարանի վերայ և ինքն էլ պառկեց նորանից մօտիկ պատին կպած տախտի վերայ. իսկ գիւղացու կինը մի այլ տեղ պառկեց։ Գիշերը փոքր երեխան սկսեց լաց լինել. մայրը զարթեցաւ և գնաց ու երեխայի մօտ պառկեցաւ։ Գիւղացին վերջացնելով իւր գործը մտաւ սենեակը և մթնումը մօտեցաւ, որ ծննդականին սպանի և փոխանակ նորան սպանելու, սպանեց իւր կնկանը։ Այդ բանի վերայ ծննդականը կրկին զարթելով, իմացաւ բանի էութիւնը, դուրս գնաց պատուհանից և սկսեց աղաղակ բարձրացնել։ Ձայնի վերայ դրացիները հաւաքուեցան և բռնեցին թշուառ գիւղացուն։

Մեզ հաղորդում են Կզլարից, որ այնտեղ երկու ամիս է, որ այնպիսի ցեխ է տիրում, որ մարդիք չեն կարողանում թէ ձիով և թէ ոտով միմեանց հետ հաղորդակցութիւն ունենալ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

Թագաւոր Ամեդէյի գահից հրաժարվելու պատճառը գեներալ Գիդալղոյի հարցը չէր. այդ միայն շարժառիթ էր, մանաւանդ որ, ինչպէս ասում են Ռուից Զօրրիլյան արդէն մի քանի ամիս է որ նախապատրաստում էր դոն—Ամեդէյի հրաժարվելը և գեներալ Գիդալղոյի հարցը նոյն իսկ նախարարութիւնն էր առաջ բերել դիտաւորութեամբ։ Ահա երկու տարի է, որ Իտալական իշխան Ամեդէյը բռնում էր Սպանիայի թագը, բայց չնայելով իւր բոլոր ազնիւ ձգտումներին և ջանքութեանը չկարողացաւ հանգստացնել իւր տէրութիւնը. մի կողմից զանազան կուսակցութեանց խռովութիւնները թէ կորտեսներում թէ թագաւորական պալատում և թէ ժողովրդի մէջ, միւս կողմից ներքին պատերազմը Կուբա կղզու վերայ և կարլօսեանց հետ— խանդավառութեան խաղաղութիւնը և օտար իշխանի գահի հաստատվելը. դոն—Ամեդէյը տեսնելով այդ և հասկանալով, որ յոյս չկայ այլ եւս իւր տեղում մնալով Սպանիան բարօրութեան հասցնել, տալով լաւ համարեց ազնուութեամբ և պատուով հրաժարվել գահից, քան թէ ուխտադրուժ լինելով սահմանադրութեան դէմ «պետական հարուածով» (Coup d' Etat) և կամ մի այլ բանի միջոցով հեռացնել դահակալութեան պայմանաժամը և անպատիւ կերպով փախչել կամ արտաքսվել Սպանիայից։

Դոն—Ամեդէյի պատգամագիրը կորտեսներին շատ մեղմ և համեստ ոճով է գրած։ Պատգամագրի մէջ նա յայտնում է, որ իւր բոլոր ջանքը Սպանիան բարգաւաճեցնելու վերայ է եղել, բայց տեսնելով որ իւր ջանքերն անօգուտ են, հրաժարվում է գահից և յանձնում իւր իշխանութիւնը կորտեսներին. Պատգամագրի վերջում յիշելով անցեալ տարուայ վտանգ փորձը նորան և իւր ամուսնուն սպանելու, խնդրում է կորտեսներին իւր ամուսնու կողմից ներել յանցաւորներին— կորտեսների պատասխանը եւս շնորհակալութեամբ և տանց ցաւակցութեան է գրած։ Այնպէս սիրով և տանց դժգոհութեան բաժանվեցաւ թագաւորը իւր տէրութիւնից։ Թագաւորն և նորա ընտանիքը մինչև Սպանիայի սահմանագլուխը հասցնելու համար կորտեսները մի յանձնաժողով ընտրեցին և մեծ պատուով ճանապարհ ձգեցին նոցա։ Ժողովուրդը ևս խուռն բազմութեամբ առանց անկարգութեան տուեց իւր հրաժարական ողջոյնը նորան, որ իւր սահմանական ազնուութեամբ չկամեցաւ խանգարել գործի ընթացքը և ժամանակին հեռացաւ գահից։ —

Որանից յետոյ կորտեսները 256 ձայնով 32ի դէմ հրատարակեցին հանրապետութիւն։ Գլխաւոր նախարար Ռուից Զօրրիլյան իւր բոլոր նախարարներով հրաժարական տալուց յետոյ կորտեսները նոր ընտրութիւններ արին։ Նախարարների նախագահ ընտրվեցաւ Ֆիգվերասը և հանրական կուսակցութեան գլխաւորներից Կաստելարը—արտաքին, Պի—ի—Մարգալը ներքին գործոց նախարարներ և այլն։— Կորտեսների նախագահ Ռիվերոյի տեղ Մարտոսը ընտրվեցաւ։

Այսպէս առանց արիւնահեղութեան, անխռովութեամբ կերպով և բոլոր կուսակցութեանց գրեթէ միաձայն համաձայնութեամբ հրատարակվեցաւ հանրապետութիւն ոչ միայն Մադրիդում, այլ և միւս մեծ քաղաքներում Սպանիայի, որքան յայտնի է առ այժմ։

Հանրապետութիւնը հրատարակվեցաւ, բայց երկարատեւ կլինի, թէ ոչ—այդ կախված է նոյն իսկ հանրապետականներից, նոցա հմտութիւնից, փորձառութիւնից, ընդունակութիւնից և հաստատամտութիւնից։ Բաւական է, որքան թշուառութիւն կրեց Սպանիան վերջին ժամանակներումս։

Իսկ ինչ վերաբերի օտար տէրութեանց միջամտութեանը—կարելի է առաջուց լինել, որ նոքա բոլորեքեան չեն յապաղելու օրինաւոր ճանաչելու նորընտիր կառավարութիւնը և նորահաստատ հանրապետութիւնը և նորա հետ շարունակելու պաշտօնական յարաբերութիւնները, ինչպէս մինչև այժմ։ Արդէն Միացեալ Նահանգները և Եւրոպական մի քանի տէրութիւններ ընդունել են Սպանիայի հանրապետութիւնը իբրև օրինաւոր։ Միացեալ Նահանգների դեսպանը ամենից առաջ մի գեղեցիկ և համակրական ճառով ողջունեց նոր հանրապետութիւնը և երկար կեանք ցանկաց նորան։ Ֆիգվերասը շնորհակալութեամբ պատասխանեց և աւելացրեց Կուբա կղզու մասին, թէ նա եւս ստանալով բոլոր ազատութիւնները նոր հանրապետութիւնից չի անջատվել։(Վերջին ժամանակներս Միացեալ Նահանգները ցանկանում էին իւրեանց սեփականացնելու, կամ գոնեա Սպանիայից անջատելու այդ կղզին։

ԳԵՐՄԱՆԻԱ

—Բեռլին. Երեսփոխանաց ժողովի վերջին նստերից մինում մեծ շփոթ և աղմուկ բարձրացրեց երեսփոխան Լասկերի ճառը այն չարագործութեանց առթիւ, որոնք եղել են և լինում են առեւտրական նախարարութեան մէջ առ հանրային և երկաթուղու կառավարութեան մէջ մասնաւորապէս։ Լասկերը օրինաւոր փաստերով ապացուցեց, որ երկաթուղու շինութեան թոյլատուութիւն տալու ժամանակ մեծ կաշառակերութիւն է լինում և խնդրեց ժողովին մի քննողական յանձնաժողով նշանակել իւր միջից այս հարցը քննելու համար։ Կառավարութիւնը Լասկերի ցանկութիւնը կատարելու համար թագաւորական պատգամագրով հրաւիրեց երեսփոխանաց ժողովը և վերին պալատը երկու երկու անդամ ընտրել և մի քանիսին ինքը նշանակելով մի յանձնաժողով կազմեց, որի պարտաւորութիւնն է Լասկերի յայտնած փաստերը ստուգել ամենայն անաչառութեամբ։ Մենք աւելի կանխանք վերադառնալու այս հարցին, երբ յանձնաժողովը կաւարտէ իւր քննութիւնը։

ՇՎԵՅՑԱՐԻԱ

—Բերն. Մի լեհացի Ակրոնիկի ազգանունով ամսոյս 4-ին փորձ փորձեց սպանել Սորեմպկովսկին, որին մեղադրում են համարում Նեչայեվին Ռուսաց կառավարութեանը յանձնելու գործում։ Սորեմպկովսկին թեթեւ վիրաւորվեցաւ, իսկ Ակրոնիկին փախաւ։

ՏԱՃԿԱՍՏԱՆ

—Կ. Պոլիս. Նոր մեծ եպարքոս Եսադ փաշան թերի ընդհանուր և զինուորական կրթութիւն է ստացել. բայց շատ արագ առաջ է ընթացել ծառայութեան մէջ շնորհիւ Սուլթանի և նորա մօրը, որոնց նա խոստացել է օգնել գահաժառանգութեան հարցում։ «Presse» լրագիրը Եսադ փաշայի նշանակութիւնը Ռուսաց կառավարութեան ազդեցութիւնն է վերաբերում։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Փետրուարի 19-ին շատ քաղաքներում տօնել են չորս հարիւրամեայ տարեդարձը անմահ աստղաբաշխ Կոպերնիկի. մի քանի տեղերումն էլ դասախօսութիւններ են արել նորա նշանակութեան և գործունէութեան մասին։

Ուաշինգտոնից հաղորդած լուրերից փետրուարի 10-ից իմանում ենք առում է «Моск. Вѣд.», որ գեներալ Բօթլէրի առաջարկութիւնը—նախագահի, սենատորների և այլ անդամների ռոճիկը աւելացնելու մասին,—հերքել է պատգամաւորների ժողովը։

Թաւրիզից գրում են «Levant Herald» լրագրին որ ապրիլ ամսումը Պարսից Շահը կերթայ ճանապարհորդութիւն անելու Եւրոպայում ու կանցնէ Թաւրիզ և Տփխիսի վերայով։ Նորա հետեւորդները կլինին 50 մարդ։ Ասում են, որ Նորին Մեծութեանը ուղեկից կլինի Հայազգի Մելքում խանը, որին պատուիրած է այդ մասին յայտնել զանազան Եւրոպական դրանց և ստոյգ որ դեկտեմբերի 9-ին Մելքում խանը եկաւ Ս. Պետերբուրգ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԸ գնում է Թիֆլիսից Ռուսաստան և Կուբանի գաւառները ամեն օր բացի կիրակի օրից։ Երկուշաբթի—Քութայիսի և Երեւանի վերայ, նմանապէս Սուխումի և Զերնոմորի գաւառները։ Երեքշաբթի—Բաքուի և Գանձակի վերայ և նմանապէս Դաղստանի գաւառը։ Չորեքշաբթի—Քութայիսի և Ալէքսանդրապօլի վերայ և նմանապէս Սուխումի և Զերնոմորի գաւառները։ Ուրբաթ—Քութայիսի, Երեւանի և Կախեթի վերայ և նմանապէս Սուխումի և Զերնոմորի գաւառները։ Շաբաթ—Բաքուի և Գանձակի վերայ և նմանապէս Դաղստանի գաւառը։

ՓՈՍՏԻ ԿԱՌՔԵՐԸ գնում են Թիֆլիսից Վլադիկավկազ և այն տեղից յետ են դառնում ամեն շաբաթ—Երեքշաբթի և Շաբաթ օրերը կէս օրից յետոյ 4 ժամին։

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔԸ Թիֆլիսից է օրը երկու անգամ, առաւօտեայ 10ժ. 30ր. և գիշերայ 10ժ. 30ր։

Շոգեկառքը գալիս է Թիֆլիզ նոյնպէս օրը երկու անգամ 4ժ. 40ր. կէսօրից յետոյ, և 10ժ. 30ր. գիշերը։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթեւեկ հիւանդների համար գտնվում է Ս. Նշան Եկեղեցու մօտ Դ. Արաջեանի տանը, հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև կէս օրից յետոյ 1 ժամը։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԳՆԱՑՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԸ,

Երկուշաբթի—Մինկևիչ վիրաբուժական հիւանդութիւնների համար. Ցեխաֆուս—կանանց հիւանդութիւնների համար, Գլադակի-երեխայոց հիւանդութիւնների համար. Գարալեվիչ և Լրինցեանց—ներքին հիւանդութիւնների համար։

Երեքշաբթի—Վերմիշեանց, Ռօտինեանց և Շահպարոնեանց—ներքին հիւանդութիւնների համար, Քուչարեանց—վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար։

Չորեքշաբթի—Պրիսելկով—կուրծքի հիւանդութիւնների համար. Հեպալէ—ականջի հիւանդութիւնների համար, և Գրադովսկին—վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար։

Հինգշաբթի—Վերմիշեանց և Ռօտինեանց ներքին հիւանդութիւնների համար. Ցեխաֆուս կանանց հիւանդութիւնների համար. Քուչարեանց—ֆրանսիական և աչքերի հիւանդութիւնների համար։

Ուրբաթ—Մինկևիչ—վիրաբուժական հիւանդութիւնների համար. Շահպարոնեանց-ներքին հիւանդութիւնների համար. Գրադովսկին վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար։

Շաբաթ—Պրիսելկով—կուրծքի հիւանդութիւնների համար. Հեպալէ—ականջի հիւանդութիւնների համար. Քուչարեանց—վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար. Կոնիֆկի—ներքին հիւանդութիւնների համար. Հարկօ — ֆրանսիական հիւանդութիւնների համար։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից, ժամը 12-ից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերով առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Փետրուարի 23)

Ոսկին (պօլուիմպերեալ)	6—13
Արծաթը հին մանէթ	12
փոխանակագիր (բարաթ) Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա	7—10
փոխանակագիր Պարսկաստան	6-80
փոխանակագիր Օդեսա	7-33½
Առաջին 5% աւոր վիճակախաղով (լօտարէյով) Ներքին փոխառութեան տոմսակը	150.
Երկրորդը	152.
Բամբակը Երեւանի, հին բերք	4-
Նոր բերք	4-50
Ամերիկայի սերմից	6-50
Տորոնը	8-10
Որդան կարմիր (կարմիր ճիճու)	38ռ.-73ռ.
Մետաքսը Նուխու լաւը	144.
Բուրդը թուշու	8-10
Թարաքամի	3-60
Շաքարը ռաֆ	8-
արտասահմանեան	8-75
Շաքարաւազը ռաֆ	6-70
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	12-80
Սուրճը (ղահվա) լիվանի	14-50
Մօկկայի	16ռ.
Բնաճարպի (սաէարին) մոմը	12-50
Երկաթը ձողաձև (բրուսկովի)	3-20
տախտակ (լիստովի)	4ռ.
մեխացու	3-
Պղինձը անգղ.	16—
տեղական	12—
Անագը (կլայեկ)	17.
Անուշադրը (նիշադր)	7-20
Աղը	—55
Պղպեղը	11-60
Լեղակը	130—180
Ալիւրը հասարակ	1-65
Բրինձը Լենքորանի	3-20
Գարին	1-20
Սպիրտը 81 աստիճանի վեդրօ	3-60
Նաւթը	4—
Ճրագուի մոմը	6-80
Աճառը (սապոն)	4-70
Իւղը	12—
Ձէթը կտաւատի	5-20
կնճիթի (քունջութի)	2-
Շիբն	2-80
Գդտորն	13—
Արճիճն	2-60
Մեղրամոմ	22-80
Տաւարի միս փութն	3-30
Ոչխարինը	4—

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 24 ФЕВРАЛЯ 1873 г. ТИФЛИСЪ. Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ. Խմբագիր Գ. ՍԻՄՕՆԵԱՆՑ. Ի Տպարանի Հ. Էնֆիաճեանց և Ընկ. ի տան Բժշկապետ Մ. Ռօտինեանց.